ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 247

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքը (Բյուրավան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*
*(Արտաշատ համայնքի (Բյուրավան բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքը (Բյուրավան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-5 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի (Բյուրավան բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 03-026-0104-0004 կադաստրային ծածկագրով 0.105 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողեր | 03-026-0104-0004 կադաստրային ծածկագրով 0.105 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Արտաշատ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Բյուրավան բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի (Բյուրավան բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ա.Ղուկարյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |

Երևան, «28» «հոկտեմբերի» 2022 թ.